

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին

Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզական Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, այսուհետ՝ Կողմեր,

տնտեսական աճի աջակցման եւ Կողմերի փոխադարձ ու արտաքին առևտրատնտեսական կապերի ընդլայնման նպատակներով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

1. Հիմնադրել Եվրասիական վերաապահովագրական ընկերություն (ԵՎԸ) (այսուհետ՝ Ընկերություն), որը կոչված է աջակցելու Կողմերի միջեւ փոխադարձ առևտրի, ներդրումների ծավալների մեծացմանը, տնտեսական ինտեգրման զարգացմանը, ներդրումային գրավչության բարձրացմանը եւ երրորդ երկրների հետ Կողմերի առևտրատնտեսական կապերի ընդլայնմանը՝ Կողմերում ու երրորդ երկրներում ձեռնարկատիրական եւ (կամ) քաղաքական ռիսկերից արտահանման վարկերի (ներառյալ արտահանման աջակցության բոլոր ֆինանսական գործիքները), արտահանմանն ուղղված ֆինանսավորման եւ ներդրումների վերաապահովագրման ոլորտում գործունեության իրականացման միջոցով:

Ընկերությունն աջակցում է միջազգային ֆինանսատնտեսական համագործակցության, այդ թվում՝ Կողմերի արտահանման վարկային գործակալությունների, միջազգային ֆինանսական եւ բանկային կազմակերպությունների ու միությունների համագործակցության ամրապնդմանը:

2. Իր գործունեության մեջ Ընկերությունն առաջնորդվում է սույն համաձայնագրով, Ընկերության կանոնադրությամբ՝ սույն համաձայնագրի

անբաժանելի մասը կազմող հավելվածի համաձայն, համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ միջազգային իրավունքի նորմերով:

Հոդված 2

1. Ընկերությունը միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող միջազգային ֆինանսական կազմակերպություն է, ունի միջազգային իրավունակություն եւ իր իրավասության շրջանակներում իրավունք ունի կնքելու միջազգային պայմանագրեր:

2. Ընկերության մասնակիցներ կարող են լինել պետությունները եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունները՝ Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով:

3. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է դրա մասնակիցների մասնաբաժինների անվանական արժեքից: Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության մասնաբաժինների վճարումն իրականացվում է Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

4. Կողմերի օրենսդրության դրույթները, որոնցով սահմանվում է գործունեության ստեղծման, լիցենզավորման, կարգավորման եւ վերահսկողության, ինչպես նաեւ կազմակերպությունների գործունեության դադարեցման կարգը, Ընկերության վրա չեն տարածվում:

5. Ընկերությունն իր գործառույթների կատարումն ապահովելու համար Կողմերի կառավարությունների հետ կարող է կնքել միջազգային պայմանագրեր, այդ թվում՝ դրանց տարածքներում Ընկերության գտնվելու պայմանների մասին, ինչպես նաեւ Կողմերի այլ լիազորված մարմինների հետ՝ վերջիններիս իրավասության մեջ մտնող հարցերով:

Հոդված 3

Սույն համաձայնագիրը բաց է դրան այլ պետությունների միանալու համար՝ նրանց կողմից Ընկերության կանոնադրությամբ նախատեսված պահանջների եւ ընթացակարգերի կատարման պայմանով:

Սույն համաձայնագիրը դրան միացող պետության համար ուժի մեջ է մտնում սույն համաձայնագրին միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

Հոդված 4

1. Յանկացած Կողմ իրավունք ունի դուրս գալու սույն համաձայնագրից՝ սույն համաձայնագրի ավանդապահին սույն համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ծանուցումն ուղարկած Կողմը Ընկերության հետ հարաբերությունների կարգավորման գործընթացն սկսում է Ընկերության կանոնադրության 25-րդ եւ 26-րդ հոդվածներին համապատասխան:

Սույն համաձայնագրի գործողությունն այդ Կողմի համար դադարում է Ընկերության կանոնադրության 25-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված ծանուցումն ավանդապահի կողմից ստանալուց 30 օրացուցային օր հետո:

3. Ընկերության կազմից Ընկերության այլ մասնակիցների դուրս գալն իրականացվում է Ընկերության կանոնադրության V բաժնին համապատասխան:

Հոդված 5

Սույն համաձայնագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ, որոնք սույն համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում եւ ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 6

Սույն համաձայնագրի վերաբերյալ վերապահումներ չեն թույլատրվում:

Հոդված 7

Սույն համաձայնագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարաձայնությունները կարգավորվում են Կողմերի միջեւ բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Համաձայնագրի կիրառման հետ կապված եւ Ընկերության գործունեության ընթացքում ծագող վեճերը կարգավորվում են Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

Հոդված 8

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից:

Կատարված է Երեւան քաղաքում, 2022 թվականի հոկտեմբերի 20-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն համաձայնագրի բնօրինակը պահվում է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունում, որը, որպես սույն համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմի կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝ <i>[ստորագրություն]</i>	Բելառուսի Հանրապետության կողմից՝ <i>[ստորագրություն]</i>	Ղազախստանի Հանրապետության կողմից՝ <i>[ստորագրություն]</i>	Ղրղզական Հանրապետության կողմից՝ <i>[ստորագրություն]</i>	Ռուսաստանի Դաշնության կողմից՝ <i>[ստորագրություն]</i>
---	---	--	--	--

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական վերաապահովագրական
ընկերության հիմնադրման մասին
համաձայնագրի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եվրասիական վերաապահովագրական ընկերության

Եվրասիական վերաապահովագրական ընկերությունը (ԵՎԸ) (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» 2022 թվականի հոկտեմբերի 20-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) համապատասխան եւ իր գործունեությունն իրականացնում է դրան եւ սույն կանոնադրությանը համապատասխան:

Սույն կանոնադրությունը Համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում, եւ դրանով սահմանվում են Ընկերության, որպես միջազգային կազմակերպության, խնդիրները, գործառույթները, իրավական կարգավիճակի եւ ֆինանսական ապահովման առանձնահատկությունները:

Բաժին I

Ընդհանուր դրույթները

Հոդված 1

Ընկերության նպատակները

Ընկերությունը կոչված է աջակցելու Ընկերության մասնակից պետությունների (այսուհետ՝ մասնակից պետություններ) միջեւ փոխադարձ առեւտրի եւ

ներդրումների ծավալների մեծացմանը, տնտեսական ինտեգրման զարգացմանը, ներդրումային գրավչության բարձրացմանը եւ երրորդ երկրների հետ մասնակից պետությունների առեւտրատնտեսական կապերի ընդլայնմանը՝ Համաձայնագրին եւ սույն կանոնադրությանը համապատասխան գործունեություն իրականացնելու միջոցով:

Ընկերությունն իրականացնում է այնպիսի գործունեություն, որն ուղղված է միջազգային ֆինանսատնտեսական համագործակցության ամրապնդմանը՝ նոր մասնակիցների կողմից դրան միանալու համար բաց լինելու սկզբունքին համապատասխան:

Հոդված 2

Ընկերության գործառույթները

Իր նպատակների իրագործման համար Ընկերությունը կատարում է հետեւյալ գործառույթները՝

իրականացնում է ձեռնարկատիրական եւ (կամ) քաղաքական ոլորտից վերաապահովագրում (ներառյալ ռետրոցեսիան ու վերաապահովագրության այլ ձեւեր) եւ արտահանման վարկերի (ներառյալ արտահանման աջակցության բոլոր ֆինանսական գործիքները), արտահանմանն ուղղված ֆինանսավորման եւ ներդրումների ապահովում՝ մասնակից պետությունների փոխադարձ առեւտրի եւ ներդրումների, դեպի երրորդ երկրներ դրանց կողմից համատեղ արտադրված արտադրանքի արտահանման, երրորդ երկրներից ներդրումների ներգրավման դեպքում եւ արտահանմանն աջակցելու նպատակով դեպի երրորդ երկրներ մասնակից պետությունների համատեղ ներդրումների առնչությամբ: Ռիսկերը վերաապահովագրման ընդունելու դեպքում Ընկերությունն առաջնորդվում է գործունեության սահմանված ցուցանիշների իրագործման, Ընկերության ֆինանսական կայունության ապահովման նպատակներով՝ միեւնույն ժամանակ հաշվի առնելով Ընկերության մասնակիցների (այսուհետ՝ մասնակիցներ) շահերի

հավասարակշռությունը՝ Ընկերության կանոնադրական կապիտալում նրանց մասնակցության մասնաբաժիններին համապատասխան.

վերաապահովագրման եւ արտահանման վարկերի (ներառյալ արտահանման աջակցության բոլոր գործիքները), արտահանմանն ուղղված ֆինանսավորման եւ ներդրումների ապահովման գործառույթների կատարման նպատակով փոխգործակցություն է իրականացնում մասնակից պետությունների եւ երրորդ երկրների արտահանման վարկային գործակալությունների, ապահովագրողների եւ վերաապահովագրողների հետ.

մասնակից պետություններում ռիսկերի վերաապահովագրման դեպքում աջակցում է ռիսկերի գնահատման իրականացմանը, ռիսկերի նվազեցմանը եւ վնասների կարգավորմանը.

Ընկերության գործունեության ապահովման համար համագործակցում է մասնավոր, պետական եւ միջազգային կազմակերպությունների, զարգացման բանկերի, ֆինանսական եւ այլ կազմակերպությունների հետ.

իրականացնում է սեփական արժեթղթերի թողարկումը, տեղաբաշխումը, շրջանառությունը, մարումը եւ հետգնումը՝ Ընկերության տնօրենների խորհրդի (այսուհետ՝ տնօրենների խորհուրդ) կողմից հաստատվող կարգին համապատասխան.

իրականացնում է մասնակից պետություններում եւ դրանց սահմաններից դուրս միջոցների (ապահովագրական պահուստների միջոցների, սեփական, ինչպես նաեւ ժամանակավորապես ազատ այլ միջոցների) ներդրումը.

անցկացնում է վերաապահովագրման բնագավառում մարքեթինգային հետազոտություններ, խորհրդատվական, հետազոտական եւ լուսավորչական գործունեություն.

իրականացնում է Ընկերության նպատակներին չհակասող այլ գործունեություն՝ Ընկերության կողմից մասնակից պետությունների հետ կնքված երկկողմ համաձայնագրերին, միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներին եւ նորմերին համապատասխան:

Հոդված 3

Ընկերության կարգավիճակը եւ գտնվելու վայրը

1. Ընկերությունն օգտվում է մասնակից պետություններում իրավաբանական անձի իրավունքներից եւ ի թիվս այլնի, իրականացնում է հետեւյալ լիազորությունները՝

ա) կատարում է սույն կանոնադրությանը չհակասող գործարքներ.

բ) վարձակալում, ձեռք է բերում եւ օտարում է շարժական ու անշարժ գույք, ինչպես նաեւ այլ կերպ տնօրինում է նշված գույքը.

գ) հանդես է գալիս մասնակից պետությունների դատական եւ արբիտրաժային մարմիններում: Ընդ որում՝ սեփական շահերի պաշտպանության համար Ընկերությանն են վերապահվում այն նույն դատավարական իրավունքները, որոնք մասնակից պետությունների օրենսդրությամբ ամրագրված են իրավաբանական անձանց համար.

դ) կատարում է Ընկերության նպատակների իրագործմանն ուղղված այլ գործողություններ՝ սույն կանոնադրությանը համապատասխան:

2. Ընկերությունը պատասխանատու չէ մասնակիցների պարտավորությունների համար, իսկ մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար: Մասնակիցներն Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկերը կրում են իրենց պատկանող մասնաբաժինների արժեքի սահմաններում:

3. Ընկերության գտնվելու վայրը՝ քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն:

4. Մասնակից պետությունների տարածքներում Ընկերության գործունեությունն իրականացվում է Համաձայնագրին, սույն կանոնադրությանը, Ընկերության կողմից մասնակից պետությունների կառավարությունների եւ

մասնակից պետությունների այլ լիազորված մարմինների հետ վերջիններիս իրավասության սահմաններում կնքված (այդ թվում՝ դրանց տարածքներում Ընկերության գտնվելու պայմանների մասին) համաձայնագրերին համապատասխան, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում կամ դրանցով չկարգավորված մասի համար՝ այն մասնակից պետությունների օրենսդրությանը համապատասխան, որոնց տարածքներում իրականացվում է այդ գործունեությունը:

5. Ընկերության կառավարիչների խորհրդի (այսուհետ՝ կառավարիչների խորհուրդ) որոշմամբ՝ Ընկերությունն իրավունք ունի բացելու մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ՝ մասնակից պետությունների օրենսդրությանը համապատասխան, եւ հաշվի առնելով Ընկերության, որպես միջազգային ֆինանսական կազմակերպության, կարգավիճակի առանձնահատկությունները, ինչպես նաեւ հիմնադրելու դուստր ընկերություններ եւ կազմակերպություններ:

Հոդված 4

Ընկերության հիմնադիրները եւ մասնակիցները

1. Ընկերության հիմնադիրներն են Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզական Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը՝ ի դեմս իրենց կառավարությունների:

2. Ընկերության հիմնադիրները դրա մասնակիցներն են դառնում, սույն կանոնադրության 6-րդ հոդվածին համապատասխան, Ընկերությունում իրենց մասնակցության մասնաբաժինների վճարումից հետո:

3. Ընկերությանը նոր պետության անդամակցելու մասին որոշումն ընդունում է կառավարիչների խորհուրդը՝ սույն կանոնադրությանը համապատասխան, կառավարիչների խորհրդի կողմից սահմանված կարգով Համաձայնագրին միանալուց եւ Ընկերությունում մասնակցության մասնաբաժինն

այդ պետության կողմից վճարելուց հետո:

4. Ընկերությանը միջազգային ֆինանսական կազմակերպության անդամակցելու մասին որոշումն ընդունում է կառավարիչների խորհուրդը՝ սույն կանոնադրությանը համապատասխան, կառավարիչների խորհրդի սահմանած կարգով Ընկերությունում մասնակցության մասնաբաժինն այդ միջազգային ֆինանսական կազմակերպության կողմից վճարվելուց հետո:

5. Մասնակից պետություններ ասելով՝ պետք է հասկանալ Ընկերության հիմնադիրները հանդիսացող պետությունները եւ սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան Ընկերությանն անդամակցած պետությունները:

6. Մասնակիցներ ասելով՝ պետք է հասկանալ մասնակից պետությունները, ինչպես նաեւ, սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան, Ընկերությանն անդամակցած միջազգային ֆինանսական կազմակերպությունները:

Բաժին II

Ընկերության կապիտալը

Հոդված 5

Կանոնադրական կապիտալը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է դրա մասնակիցների մասնաբաժինների անվանական արժեքից եւ կազմում է 15 միլիարդ ռուսական ռուբլի:

Ընկերության կանոնադրական կապիտալում Ընկերության հիմնադիրների մասնակցության մասնաբաժինները ներկայացված են հավելվածում, որը սույն կանոնադրության անբաժանելի մասն է, եւ համապատասխանում են համապատասխան մասնաբաժնի անվանական արժեքի ու Ընկերության

կանոնադրական կապիտալի հարաբերակցությանը:

Հոդված 6

Կանոնադրական կապիտալում մասնակցության մասնաբաժինների վճարումը

1. Ընկերության յուրաքանչյուր հիմնադիր իրականացնում է Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության իր մասնաբաժնի սկզբնական վճարումը՝ մասնակցության մասնաբաժնի առնվազն 25 տոկոսի չափով, որը տվյալ հիմնադրի համար սահմանված է սույն կանոնադրության հավելվածին համապատասխան, Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած 30 օրացուցային օրվանից ոչ ուշ:

2. Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության մասնաբաժնի սկզբնական վճարումը, սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, կարող է կատարվել վաղաժամկետ՝ Համաձայնագրի ստորագրման օրվանից: Ընդ որում՝ Ընկերության կանոնադրական կապիտալի ձեւավորման համար վճարումը հաշվեգրվում է կառավարիչների խորհրդի կողմից որոշվող վարկային կազմակերպության հաշվին:

3. Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության մասնաբաժինների մնացած մասերը հիմնադիրների կողմից ամեն տարի՝ 2 տարվա ընթացքում, մարվում են հավասար մասնաբաժիններով, որոնցից առաջինը ենթակա է վճարման սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան կատարված վճարումից հետո 12 ամսվանից ոչ ուշ:

4. Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության մասնաբաժինների վճարումը Ընկերության հիմնադիրների կողմից կարող է կատարվել վաղաժամկետ:

5. Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության

մասնաբաժինների վճարումը Ընկերության ստեղծման եւ դրա կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում իրականացվում է անվանական արժեքով:

6. Մասնակցության մասնաբաժինների վճարումը կատարվում է ռուսական ռուբլով՝ մասնակից պետության կառավարության կողմից լիազորված պետական մարմնի կամ կազմակերպության կողմից:

7. Եթե սույն հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով սահմանված ժամկետների ընթացքում Ընկերության հիմնադիրը հայտարարել է վճարման մասին կամ վճարել է կանոնադրական կապիտալում իր մասնակցության մասնաբաժնից՝ սույն կանոնադրության հավելվածով նախատեսվածի համեմատությամբ ավելի պակաս գումար, կառավարիչների խորհուրդը պարտավոր է Ընկերության մյուս հիմնադիրներին անհապաղ առաջարկել, որ նրանք օգտվեն կանոնադրական կապիտալում իրենց մասնակցության մասնաբաժնի ավելացման իրավունքից: Այդ իրավունքը պետք է իրացվի նշված առաջարկն ստանալու օրվանից հետո 6 ամսվա ընթացքում: Այդ իրավունքից հրաժարվելու դեպքում կառավարիչների խորհուրդը որոշում է ընդունում նշված մասնաբաժնի վճարումը կրկին առաջարկելու մասին:

8. Ընկերության հիմնադիրների կողմից մասնաբաժինների վճարումից ստացված միջոցները հաշվեգրվում են Ընկերության հաշվին՝ կառավարիչների խորհրդի կողմից որոշվող վարկային կազմակերպությունում:

Հոդված 7

Կանոնադրական կապիտալի փոփոխումը

1. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել կամ նվազեցվել կառավարիչների խորհրդի որոշմամբ՝ սույն կանոնադրությանը համապատասխան եւ կառավարիչների խորհրդի կողմից սահմանված կարգով:

2. Մասնակիցներն ունեն մասնաբաժինների ձեռքբերման համար նախապատվության իրավունք՝ կանոնադրական կապիտալի՝ կանոնադրական կապիտալում նրանց պատկանող մասնաբաժինն համամասն չափով ավելացման դեպքում, դրա ավելացման մասին որոշում ընդունելուց անմիջապես առաջ: Նրանցից որեւէ մեկի կողմից նշված իրավունքից ամբողջությամբ կամ մասամբ հրաժարվելու դեպքում կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում մասնաբաժինների ձեռքբերման կարգը սահմանվում է կառավարիչների խորհրդի կողմից:

Հոդված 8

Ընկերության պահուստային ֆոնդը եւ այլ ֆոնդեր

1. Ընկերությունում ստեղծվում է պահուստային ֆոնդ՝ Ընկերության կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

2. Ընկերության պահուստային ֆոնդը ձեւավորվում է ամեն տարի կատարվող պարտադիր հատկացումների միջոցով՝ զուտ շահույթի առնվազն 10 տոկոսի չափով՝ մինչեւ սույն հոդվածի 1-ին կետով սահմանված չափն ապահովվելը:

3. Ընկերության պահուստային ֆոնդը նախատեսված է դրա վնասները ծածկելու, ինչպես նաեւ Ընկերության պարտատոմսերը մարելու եւ այլ միջոցների բացակայության դեպքում Ընկերության մասնաբաժինները հետ գնելու համար: Պահուստային ֆոնդը չի կարող օգտագործվել այլ նպատակներով:

4. Պահուստային ֆոնդից բացի՝ Ընկերությունն իրավունք ունի ստեղծելու այլ ֆոնդեր եւ:

5. Այլ ֆոնդերի հատկացումները կատարվում են տնօրենների խորհրդի կողմից սահմանվող չափերով եւ կարգով:

Հոդված 9

Ֆինանսական կայունությանը ներկայացվող պահանջները

Ընկերությունը պարտավոր է պահպանել տնօրենների խորհրդի կողմից սահմանված՝ Ընկերության ֆինանսական կայունության ապահովմանը ներկայացվող պահանջները, այդ թվում՝ վերաապահովագրության պայմանագրերով ստանձնած պարտավորությունների գծով պատասխանատվության ընդհանուր սահմանաչափի մասով:

Հոդված 10

Ընկերության շահաբաժինները

1. Հաշվետու տարվա արդյունքներով եւ արտաքին աուդիտորի կողմից հաստատված տարեկան հաշվետվությունը հաստատելուց հետո կառավարիչների խորհուրդը Ընկերության գործունեությունն ընդլայնելու նպատակով ընդունում է որոշում (հայտարարում է) շահույթն Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացմանը, ինչպես նաեւ Ընկերության պահուստային եւ այլ ֆոնդերի համալրմանն ուղղելու մասին:

Եթե Ընկերության կանոնադրական կապիտալն ավելանում է Ընկերության շահույթի հաշվին, ապա կանոնադրական կապիտալում մասնակիցների մասնաբաժինները ենթակա են ավելացման այն մասնաբաժինների քանակին համամասնորեն, որոնք նրանց կողմից վճարվել են այն ֆինանսական տարվա

վերջի դրությամբ, որում ստացվել է շահույթը:

2. Եթե նպատակահարմար չլինելու պատճառով կառավարիչների խորհուրդը որոշում չի ընդունում շահույթն Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացմանը, ինչպես նաև Ընկերության պահուստային եւ այլ ֆոնդերի համալրմանն ուղղելու մասին, ապա կառավարիչների խորհուրդը կարող է որոշում ընդունել (հայտարարել)՝ Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակիցների մասնակցության մասնաբաժիններին համապատասխան մասնակիցներին շահաբաժիններ վճարելու մասին:

3. Մասնակիցներին շահաբաժիններ վճարելու մասին որոշումը (հայտարարությունը) կարող է ընդունվել միայն այն բանից հետո, երբ պահուստային ֆոնդն ապահովվել է սույն կանոնադրության 8-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված չափը:

4. Հաշվետու տարվա արդյունքներով մասնակիցներին շահաբաժիններ վճարելու մասին որոշումը (հայտարարությունը) կարող է ընդունվել հաշվետու տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում: Ընկերությունը պարտավոր է վճարել հայտարարված շահաբաժինները:

5. Ընկերության զուտ շահույթը որոշվում է Ընկերության ֆինանսական (հաշվապահական) հաշվետվությունների տվյալներին համապատասխան:

6. Շահաբաժիններ վճարելու մասին որոշումը (հայտարարությունը) ընդունվում է կառավարիչների խորհրդի կողմից: Նշված որոշմամբ պետք է սահմանվեն մասնաբաժինների գծով շահաբաժինների չափը, դրանց վճարման ձեւը եւ վճարման ամսաթիվը:

7. Շահաբաժինների՝ դրամական տեսքով վճարումն իրականացվում է Ընկերության կողմից՝ անկանխիկ եղանակով:

8. Մասնակիցներին Ընկերության շահաբաժինների վճարումն իրականացվում է այն մասնաբաժինների քանակին համամասնորեն, որոնք նրանց

կողմից վճարվել են այն ֆինանսական տարվա վերջի դրությամբ, որում ստացվել է շահույթը:

Բաժին III

Ընկերության կառավարումը

Ընկերության կառավարումն իրականացնում են՝
կառավարիչների խորհուրդը,
տնօրենների խորհուրդը,
Ընկերության վարչությունը (այսուհետ՝ վարչություն),
վարչության նախագահը:

Հոդված 11

Կառավարիչների խորհուրդը

1. Կառավարիչների խորհուրդը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն կառավարիչների խորհրդում նշանակում է կառավարության ղեկավարի տեղակալի մակարդակով 1 անդամ եւ դրա մասին պաշտոնական կարգով տեղեկացնում է մյուս մասնակիցներին եւ Ընկերությանը:

Ընկերությանը միջազգային ֆինանսական կազմակերպություն հանդիսացող նոր մասնակցի անդամակցության դեպքում այդ մասնակիցը Ընկերության կառավարիչների խորհրդում նշանակում է 1 անդամ՝ նշված կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի ղեկավարների թվից:

3. Կառավարիչների խորհրդում նախագահությունն իրականացվում է 1 մասնակցի կողմից, ռոտացիոն սկզբունքով, ռուսերեն այբբենական կարգով, 1 օրացուցային տարվա ընթացքում՝ առանց երկարաձգման իրավունքի:

4. Կառավարիչների խորհրդում պարտականությունների կատարման համար կառավարիչների խորհրդի նախագահին եւ անդամներին վարձատրություն չի տրվում: Նրանց կողմից իրենց պարտականությունների կատարման ընթացքում կարող են փոխհատուցվել նիստերին մասնակցության հետ կապված ծախսերն այն չափով, որը սահմանված է՝ ելնելով Ընկերության ֆինանսական հնարավորություններից:

Հոդված 12

Կառավարիչների խորհրդի իրավասությունը

Կառավարիչների խորհրդի իրավասությանն է վերապահվում հետեւյալ հարցերի լուծումը՝

ա) Ընկերության զարգացման 5-ամյա ռազմավարության հաստատումը եւ դրա կատարման (իրականացման) արդյունքների մասին զեկույցի ուսումնասիրումը, միջազգային համագործակցության բնագավառում Ընկերության առաջնահերթությունների սահմանումը եւ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության մասին համաձայնագրերի կնքման վերաբերյալ որոշումների ընդունումը.

բ) Ընկերության կազմի մեջ նոր մասնակիցների ընդունումը եւ ընդունման պայմանների սահմանումը, Ընկերությունում առանձին մասնակցի մասնակցության կասեցումը եւ (կամ) դադարեցումը.

գ) Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը՝ մասնակիցների ներդրումների, այդ թվում՝ կանոնադրական կապիտալը նրանց միջեւ վերաբաշխելու եւ (կամ) ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին.

դ) Ընկերության վերաապահովագրման, միջոցների ներդրման եւ ֆինանսական կայունության ապահովման մասով Ընկերության գործունեության կարգի կանոնակարգման վերաբերյալ տնօրենների խորհրդին ընդհանուր ցուցումներ տալը.

ե) շահույթը կանոնադրական կապիտալի ավելացմանը, Ընկերության պահուստային եւ այլ ֆոնդերի համալրմանը, հաշվետու տարվա արդյունքներով շահաբաժինների վճարմանը (հայտարարմանը) ուղղելը.

զ) Ընկերության այլ ֆոնդերի ստեղծման համաձայնեցումը՝ դրա առանձին գործառույթների իրականացման համար.

է) Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման (ավելացման կամ նվազեցման) կարգի հաստատումը.

ը) Ընկերության գործունեության կասեցումը, դրա լուծարումը, ներառյալ մասնակիցների միջեւ Ընկերության զուտ ակտիվների բաշխման ժամկետների եւ պայմանների սահմանումը, Ընկերության մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների բացումը (փակումը).

թ) սույն կանոնադրության մեջ փոփոխությունների եւ լրացումների կատարման վերաբերյալ հարցերի լուծումը.

ժ) տնօրենների խորհրդի կազմի հաստատումը, տնօրենների խորհրդի անդամների նշանակումը եւ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժա) կառավարիչների խորհրդի աշխատանքի կանոնակարգի հաստատումը.

ժբ) այլ հարցեր, որոնց լուծումը կառավարիչների խորհրդին է վերապահվում՝ սույն կանոնադրությանը եւ Համաձայնագրին համապատասխան:

Հոդված 13

Կառավարիչների խորհրդում քվեարկությունը

1. Կառավարիչների խորհրդի յուրաքանչյուր անդամ քվեարկության ժամանակ ունի 1 ձայն:

2. Կառավարիչների խորհրդի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության, սակայն տարին առնվազն 1 անգամ:

Կառավարիչների խորհրդի ցանկացած անդամ կարող է նախաձեռնել կառավարիչների խորհրդի արտահերթ նիստի անցկացում, ինչպես նաև նիստի օրակարգին առնչվող առաջարկներ ներկայացնել:

3. Կառավարիչների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան ներկա են կառավարիչների խորհրդի բոլոր անդամները:

4. Կառավարիչների խորհուրդը բոլոր հարցերի շուրջ որոշումներն ընդունում է կոնսենսուսով:

5. Կառավարիչների խորհրդի կողմից Ընկերությունում դրա մասնակիցներից որեւէ մեկի մասնակցության կասեցման կամ դադարեցման մասին որոշում ընդունելու դեպքում քվեարկության արդյունքները որոշելիս այդ մասնակցի առարկությունները հաշվի չեն առնվում:

6. Կառավարիչների խորհուրդն իրավունք ունի անցկացնելու քվեարկությունը՝ կառավարիչների խորհրդի անդամների հեռակա գրավոր հարցման միջոցով: Այդպիսի որոշումները ձեւակերպվում են կառավարիչների խորհրդի նիստի արձանագրությամբ, որը կառավարիչների խորհրդի անդամներին է ուղարկվում դրա անցկացումից հետո 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

7. Կառավարիչների խորհրդի նիստերի արձանագրությունները պահվում են Ընկերության արխիվում:

8. Կառավարիչների խորհրդի նախագահը՝

ա) իրականացնում է հերթական նիստում կառավարիչների խորհրդի կողմից քննարկման դրվող հարցերի նախապատրաստման ընդհանուր ղեկավարումը.

բ) սահմանում է նիստի օրակարգը.

գ) բացում, վարում եւ փակում է կառավարիչների խորհրդի նիստերը:

9. Կառավարիչների խորհրդի անդամներն իրավունք ունեն ստանալու Ընկերության գործունեության մասին տեղեկատվություն եւ ծանոթանալու Ընկերության հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններին ու այլ փաստաթղթերի:

10. Կառավարիչների խորհուրդն իր գործունեությունն ապահովելու համար իրավունք ունի ստեղծելու օժանդակ եւ (կամ) խորհրդատվական-խորհրդակցական մարմիններ, որոնք Ընկերության կառավարման մարմիններ չեն:

Հոդված 14

Տնօրենների խորհուրդը

1. Տնօրենների խորհուրդը Ընկերության կառավարման մարմին է, որն իրականացնում է դրա գործունեության ընդհանուր ղեկավարումը:

2. Տնօրենների խորհրդի մեջ մտնում է մեկական ներկայացուցիչ՝ յուրաքանչյուր մասնակից պետության կառավարությունից՝ նախարարի (նախարարի տեղակալի) մակարդակով կամ միջազգային ֆինանսական կազմակերպությունից՝ դրա կառավարման բարձրագույն մարմնի ղեկավարների թվից:

Տնօրենների խորհրդի անդամի նշանակման եւ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումներն ընդունվում են կառավարիչների խորհրդի կողմից՝ համապատասխան մասնակցի կողմից նշանակված՝ կառավարիչների խորհրդի անդամի ներկայացմամբ:

Տնօրենների խորհրդի անդամներին նշանակելու դեպքում եւ նրանց կողմից իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի շահերի բախման բացակայության սկզբունքը:

3. Տնօրենների խորհրդում նախագահությունն իրականացվում է 1 մասնակցի կողմից, ռոտացիոն սկզբունքով, ռուսերեն այբբենական կարգով, 1 օրացուցային տարվա ընթացքում՝ առանց երկարաձգման իրավունքի:

4. Տնօրենների խորհրդում պարտականությունների կատարման համար տնօրենների խորհրդի նախագահին եւ անդամներին վարձատրություն չի տրվում: Նրանց կողմից իրենց պարտականությունների կատարման ընթացքում կարող են փոխհատուցվել նիստերին նրանց մասնակցության հետ կապված ծախսերը: Այդ փոխհատուցումների չափերը սահմանվում են՝ հաշվի առնելով Ընկերության ֆինանսական հնարավորությունները:

Հոդված 15

Տնօրենների խորհրդի իրավասությունը

1. Տնօրենների խորհրդի իրավասությանն են վերապահվում հետեւյալ հարցերը՝

ա) ֆինանսական տարվա եւ միջնաժամկետ ժամանակահատվածի համար Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների (առաջնահերթությունների) եւ արդյունավետության առանցքային ցուցանիշների սահմանումը՝ Ընկերության զարգացման 5-ամյա ռազմավարությանը համապատասխան.

բ) ձեռնարկատիրական եւ (կամ) քաղաքական ռիսկերից վերաապահովագրման (ներառյալ ռետրոցեսիան ու վերաապահովագրության այլ ձեւեր) եւ արտահանման վարկերի, արտահանմանն ուղղված ֆինանսավորման եւ ներդրումների ապահովման իրականացման գծով Ընկերության գործունեության մասին կարգի (հիմնադրույթի) հաստատումը, այդ թվում՝ Ընկերության պահուստների ձեւավորման մասին հիմնադրույթի եւ ապահովագրական ռիսկերի

գնահատման ու ապահովագրական ռիսկերի կառավարման մասին հիմնադրույթի հաստատումը՝ սույն կանոնադրության 2-րդ հոդվածին համապատասխան.

գ) վարչության քանակական կազմի եւ կազմակերպական կառուցվածքի հաստատումը, վարչության նախագահի, վարչության նախագահի տեղակալների (եթե այդպիսիք կան) եւ վարչության անդամների նշանակումը, այդ թվում՝ աշխատանքային հարաբերությունների երկարաձգումը՝ հաշվի առնելով Ընկերության զարգացման 5-ամյա ռազմավարության կատարման (իրագործման) արդյունքները, հեռացումը, պաշտոնից ազատումը.

դ) վարչության նախագահի, վարչության նախագահի տեղակալների (եթե այդպիսիք կան) եւ վարչության անդամների պայմանագրերի պայմանների եւ վարձատրությունների չափի սահմանումը.

ե) վարչության գործառույթների սահմանումը եւ Ընկերության աշխատակիցների հաստիքների թվի հաստատումը՝ հաշվի առնելով մասնակից պետությունների ներկայացվածության սկզբունքը՝ ելնելով Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության մասնաբաժնից.

զ) Ընկերության տարեկան հաշվետվությունների հաստատումը՝ հաշվի առնելով աուդիտորական եզրակացությունը.

է) հերթական ֆինանսական տարվա համար Ընկերության բյուջեի հաստատումը.

ը) Ընկերության բյուջեի ձեւավորման եւ դրա կատարողականի հսկողության մասին հիմնադրույթի հաստատումը.

թ) վարչության նախագահին, վարչության նախագահի տեղակալներին (եթե այդպիսիք կան), վարչության անդամներին վարձատրությունների վճարման մասին որոշման ամենամյա ընդունումը՝ հաշվի առնելով սույն կետի «ա» ենթակետին համապատասխան հաստատված արդյունավետության առանցքային ցուցանիշները.

ժ) Ընկերության արտաքին աուդիտորի, Ընկերության արտաքին աուդիտորի թեկնածության ընտրության կարգի, Ընկերության ներքին աուդիտի ծառայության եւ դրա անձնակազմի գործունեության կարգի, Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի եւ դրա անձնակազմի գործունեության կարգի հաստատումը.

ժա) Ընկերության պահուստային եւ, կառավարիչների խորհրդի համաձայնեցմամբ, այլ ֆոնդերի ստեղծումն ու չափերի սահմանումը՝ դրա առանձին գործառույթների իրականացման համար.

ժբ) վերաապահովագրության համար սահմանված սահմանաչափը գերազանցող գործարքների կատարման համար համաձայնության մասին որոշումների կամ դրանց հետագա հաստատման մասին որոշումների քննարկումն ու ընդունումը.

ժգ) Ընկերության լուծարման ընթացակարգի սահմանումը.

ժդ) տնօրենների խորհրդի եւ վարչության աշխատանքի կանոնակարգի հաստատումը.

ժե) Ընկերության ֆինանսական կայունությանը ներկայացվող պահանջների հաստատումը, այդ թվում՝ վերաապահովագրության պայմանագրերով ստանձնած պարտավորությունների գծով պատասխանատվության ընդհանուր սահմանաչափի մասով.

ժզ) մասնակից պետություններում եւ դրանց սահմաններից դուրս միջոցների (ապահովագրական պահուստների միջոցների, սեփական, ինչպես նաեւ ժամանակավորապես ազատ այլ միջոցների) ներդրման կարգի հաստատումը.

ժէ) արդյունավետության առանցքային ցուցանիշների հաշվարկի մեթոդիկայի հաստատումը.

ժը) Ընկերության կառավարչական հաշվետվությունների մասին հիմնադրույթի հաստատումը.

ժթ) Ընկերության գնումների մասին հիմնադրույթի հաստատումը.

ի) Ընկերության աշխատողների աշխատանքի դիմաց վճարման մասին հիմնադրույթի հաստատումը.

իա) Ընկերության սեփական արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, մարման եւ հետգնման կարգի հաստատումը.

իբ) իր իրավասությանը վերապահված հարցերի շուրջ առաջարկություններ նախապատրաստելը եւ կառավարիչների խորհուրդ ներկայացնելը.

իգ) այլ հարցեր, որոնց լուծումը տնօրենների խորհրդին է վերապահվում՝ Համաձայնագրին եւ սույն կանոնադրությանը համապատասխան, բացառությամբ այն հարցերի լուծման, որոնք վերապահված են կառավարիչների խորհրդի իրավասությանը:

2. Կառավարիչների խորհրդի՝ սույն կանոնադրության 12-րդ հոդվածի «դ» ենթակետով նախատեսված ընդհանուր ցուցումները պարտադիր են տնօրենների խորհրդի կողմից հաշվի առնվելու համար՝ վերջինիս կողմից սույն հոդվածի 1-ին կետի «բ», «ժե» եւ «ժզ» ենթակետերով նախատեսված իրավասության շրջանակներում գործունեության իրականացման դեպքում:

3. Վարչության նախագահի հետ պայմանագիրն ստորագրվում է տնօրենների խորհրդի նախագահի կողմից կամ, նրա գրավոր հանձնարարությամբ՝ տնօրենների խորհրդի անդամի կողմից:

Հոդված 16

Տնօրենների խորհրդում քվեարկությունը

1. Տնօրենների խորհրդի յուրաքանչյուր անդամ քվեարկության ժամանակ ունի ձայների այնքան քանակ, որը համամասն է Ընկերության կանոնադրական կապիտալում իր կողմից ներկայացվող մասնակցի մասնաբաժնին:

2. Տնօրենների խորհրդի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության, սակայն տարին առնվազն 2 անգամ:

Տնօրենների խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են տնօրենների խորհրդի նախագահի կողմից՝ վերջինիս սեփական նախաձեռնությամբ, տնօրենների խորհրդի անդամի, Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի, Ընկերության ներքին աուդիտի կազմակերպման եւ իրականացման համար պատասխանատու պաշտոնատար անձի կամ աուդիտորի (աուդիտորական կազմակերպության), վարչության կամ դրա նախագահի, ինչպես նաեւ այն մասնակցի (մասնակիցների) պահանջով, որոնց բաժին է ընկնում Ընկերության վճարված կանոնադրական կապիտալում մասնաբաժնի առնվազն 10 տոկոսը:

3. Սույն կանոնադրության 15-րդ հոդվածի 1-ին կետի «ա»-«գ», «ե»-«ը», «ժբ», «ժե»-«իբ» ենթակետերով նախատեսված հարցերի շուրջ տնօրենների խորհուրդը որոշումներ է ընդունում ձայների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդն ունեցող իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ընկերության գործունեությանն առնչվող մնացած հարցերի շուրջ որոշումները տնօրենների խորհրդի կողմից ընդունվում են ձայների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ:

Ձայների հավասար քանակի դեպքում տնօրենների խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

4. Տնօրենների խորհուրդն իրավունք ունի քվեարկությունն անցկացնելու տնօրենների խորհրդի անդամների հեռակա գրավոր հարցման միջոցով: Այդպիսի որոշումները ձեւակերպվում են տնօրենների խորհրդի նիստի արձանագրությամբ, որը տնօրենների խորհրդի անդամներին է ուղարկվում դրա անցկացումից հետո 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

5. Տնօրենների խորհրդի նիստերի արձանագրությունները պահվում են Ընկերության արխիվում:

6. Տնօրենների խորհրդի նախագահը՝

ա) իրականացնում է հերթական նիստում տնօրենների խորհրդի կողմից քննարկման դրվող հարցերի նախապատրաստման ընդհանուր ղեկավարումը.

բ) սահմանում է նիստի օրակարգը.

գ) բացում, վարում եւ փակում է տնօրենների խորհրդի նիստերը.

դ) նշանակում է տնօրենների խորհրդի նախագահի պարտականությունների ժամանակավոր պաշտոնակատար՝ տնօրենների խորհրդի անդամների թվից:

7. Տնօրենների խորհրդի անդամներն իրավունք ունեն ստանալու Ընկերության գործունեության մասին տեղեկատվություն եւ ծանոթանալու Ընկերության հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների ու այլ փաստաթղթերի հետ:

8. Տնօրենների խորհուրդն իր գործունեությունն ապահովելու համար իրավունք ունի ստեղծելու օժանդակ եւ (կամ) խորհրդատվական-խորհրդակցական մարմիններ, որոնք Ընկերության կառավարման մարմիններ չեն:

Հոդված 17

Վարչությունը

1. Վարչությունը Ընկերության՝ մշտապես գործող կոլեգիալ գործադիր մարմին է, որն իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը:

Տնօրենների խորհրդի կողմից վարչությունը, որպես կանոն, նշանակվում է 5 տարի ժամկետով: Վարչության անդամների լիազորությունների ժամկետը կարող է երկարաձգվել՝ հաշվի առնելով Ընկերության զարգացման 5-ամյա ռազմավարության մեջ ամրագրված ցուցանիշների կատարումը:

Իր գործունեությունն իրականացնելիս վարչությունն առաջնորդվում է Համաձայնագրով, սույն կանոնադրությամբ, կառավարիչների խորհրդի եւ տնօրենների խորհրդի որոշումներով:

Վարչությունը հաշվետու է կառավարիչների խորհրդին եւ տնօրենների խորհրդին:

Վարչության անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են՝ ելնելով Ընկերության շահերից:

Վարչությունում նշանակումը կատարվում է մասնագիտական հիմունքով (ելնելով թեկնածուների մասնագիտական պատրաստվածությունից, նրանց գործարար համբավից, գիտելիքներից եւ որակավորումից, որոնք անհրաժեշտ են վերապահված պարտականությունների պատշաճ կատարման համար)՝ Ընկերության բոլոր հիմնադիրների ներկայացվածության ապահովմամբ:

Վարչության անդամի նշանակման, նրա լիազորությունների երկարաձգման եւ վաղաժամկետ դադարեցման մասին որոշումներն ընդունվում են տնօրենների խորհրդի կողմից:

2. Վարչության իրավասությանն են վերապահվում հետևյալ հարցերը՝

ա) Ընկերության զարգացման 5-ամյա ռազմավարության նախագծի, այդ թվում՝ դրա կատարման (իրագործման) արդյունքների մասին զեկույցի, ինչպես նաև միջազգային համագործակցության բնագավառում Ընկերության առաջնահերթությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության մասին համաձայնագրերի կնքման վերաբերյալ առաջարկների պատրաստումն ու կառավարիչների խորհրդի քննարկմանը ներկայացնելը.

բ) Ֆինանսական տարվա եւ միջնաժամկետ ժամանակահատվածի համար Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների (առաջնահերթությունների) վերաբերյալ առաջարկների պատրաստումը եւ տնօրենների խորհրդի հաստատմանը ներկայացնելը.

գ) Ընկերության ֆինանսական կայունությանը ներկայացվող պահանջների վերաբերյալ, այդ թվում՝ վերաապահովագրության պայմանագրերով ստանձնած պարտավորությունների գծով պատասխանատվության ընդհանուր սահմանաչափի մասով առաջարկների պատրաստումը եւ տնօրենների խորհրդի հաստատմանը ներկայացնելը.

դ) այնպիսի որոշումների ընդունումը, որոնք ուղղված են ձեռնարկատիրական եւ (կամ) քաղաքական ռիսկերից Ընկերության կողմից վերաապահովագրության (ներառյալ ռետրոցեսիան ու վերաապահովագրության այլ ձեւեր) գործունեության իրականացմանը եւ արտահանման վարկերի, արտահանմանն ուղղված ֆինանսավորման եւ ներդրումների ապահովմանը՝ սույն կանոնադրության 2-րդ հոդվածին համապատասխան տնօրենների խորհրդի կողմից հաստատվող կարգի համաձայն.

ե) կառավարիչների խորհրդի եւ տնօրենների խորհրդի նիստերի նախապատրաստումն ու կազմակերպական ապահովումը.

զ) յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար Ընկերության

Ֆինանսական տարվա հաշվետվությունների, բյուջեի նախագծերի (եկամուտների եւ ծախսերի պլանի) պատրաստումը եւ տնօրենների խորհրդի հաստատմանը ներկայացնելը.

է) Ընկերության աշխատողների աշխատանքի դիմաց վճարման մասին հիմնադրույթի պատրաստումը եւ տնօրենների խորհրդի հաստատմանը ներկայացնելը.

ը) միջոցների տեղաբաշխմանը եւ ներգրավմանն առնչվող որոշումների ընդունումը, Ընկերության ակտիվների եւ պասիվների ռացիոնալ կառուցվածքի սահմանումը՝ դրանց իրացվելիության պահպանման եւ շահույթի ստացման նպատակներով, ռիսկերի եւ իրացվելիության հսկողության ապահովումը.

թ) վարչության իրավասությանը վերապահված ներքին փաստաթղթերի հաստատումը (ներառյալ Ընկերության կարգերը, հիմնադրույթները, կանոնները, կանոնակարգերը, հրահանգները, պահանջները, ընթացակարգերը եւ այլ ներքին փաստաթղթեր).

ժ) այն ներքին նորմատիվ փաստաթղթերի պատրաստումը, նախնական քննարկումը եւ վարչության նախաձեռնությամբ՝ տնօրենների խորհրդի քննարկմանը ներկայացնելու մասին որոշումների ընդունումը, որոնց հաստատումը վերապահված է տնօրենների խորհրդի իրավասությանը.

ժա) այլ փաստաթղթերի նախագծերի պատրաստումը եւ տնօրենների խորհրդի քննարկմանը ներկայացնելը, որոնց հաստատումը վերապահված է տնօրենների խորհրդի իրավասությանը.

ժբ) Ընկերության կազմակերպական կառուցվածքի եւ հաստիքացուցակի հաստատումը.

ժգ) Ընկերության աշխատակիցների սոցիալական ապահովման, գնահատման (ատեստավորման), ուսուցման պայմանների սահմանումը՝ գտնվելու երկրի օրենսդրությանը համապատասխան.

ժդ) վերաապահովագրման բնագավառում մարքեթինգային հետազոտությունների անցկացումը, խորհրդատվական, հետազոտական եւ լուսավորչական գործունեության իրականացումը.

ժե) Ընկերության գործունեությանն առնչվող այլ հարցերի քննարկումը, որոնք վարչության քննարկմանն են ներկայացվում վարչության նախագահի որոշմամբ եւ վերապահված չեն կառավարիչների խորհրդի ու տնօրենների խորհրդի իրավասությանը:

3. Վարչության թվակազմը որոշվում է տնօրենների խորհրդի կողմից: Վարչության անդամները նշանակվում եւ պաշտոնից ազատվում են տնօրենների խորհրդի կողմից: Վարչության անդամները չեն կարող միաժամանակ լինել կառավարիչների խորհրդի եւ (կամ) տնօրենների խորհրդի անդամներ:

Վարչության անդամներին նշանակելու դեպքում եւ նրանց կողմից իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի շահերի բախման բացակայության սկզբունքը:

Վարչության նախագահի ներկայացմամբ՝ տնօրենների խորհուրդն ընդունում է որոշում՝ Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին վարչության կազմի մեջ ընդգրկելու մասին: Վարչության անդամների միջեւ պարտականությունների բաշխումն իրականացնում է վարչության նախագահը: Տնօրենների խորհուրդն անհրաժեշտության դեպքում կարող է վերանայել վարչության կազմը եւ դրա անդամների թիվը:

4. Վարչության նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության, սակայն 2 ամիսն առնվազն 1 անգամ: Նիստն իրավազոր է, եթե դրան ներկա է վարչության անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը:

Վարչության նիստում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Որոշումներ կայացնելիս վարչության յուրաքանչյուր անդամ ունի 1 ձայն: Ձայների հավասարության դեպքում վարչության նախագահի ձայնը

որոշիչ է: Վարչության կողմից ընդունված որոշումները պարտադիր են կատարման համար:

Վարչության անդամներն իրավունք ունեն վարչության նիստերի արձանագրությունների մեջ ներառելու իրենց դիտողություններն ու առաջարկությունները: Վարչության նիստի արձանագրությունն ստորագրվում է վարչության նախագահի կողմից:

Հոդված 18

Վարչության նախագահը

1. Վարչության նախագահն Ընկերության եւ վարչության գործունեությունը ղեկավարում է իր իրավասության եւ լիազորությունների շրջանակներում, որոնք սահմանված են սույն կանոնադրությամբ եւ կառավարիչների խորհրդի ու տնօրենների խորհրդի որոշումներով:

2. Վարչության նախագահին նշանակում է տնօրենների խորհուրդը՝ 5 տարին չգերազանցող ժամկետով:

Վարչության նախագահը մասնակցում է՝

տնօրենների խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

կառավարիչների խորհրդի նիստերին՝ առանց ձայնի իրավունքի:

Վարչության նախագահը չի կարող միաժամանակ լինել կառավարիչների խորհրդի եւ (կամ) տնօրենների խորհրդի անդամ:

3. Վարչության նախագահը Ընկերության պաշտոնական ներկայացուցիչն է եւ օժտված է հետեւյալ լիազորություններով՝

ա) Ընկերության ընթացիկ գործունեության կառավարում՝ կառավարիչների խորհրդի, տնօրենների խորհրդի եւ վարչության որոշումներին համապատասխան.

բ) Ընկերության անունից (առանց լիազորագրի) գործառնությունների եւ

գործարքների կատարում, պետությունների, միջազգային ֆինանսական եւ այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում Ընկերության շահերի ներկայացում.

գ) Ընկերության աշխատակիցներին աշխատանքի ընդունում եւ ազատում, նրանց պաշտոնեական պարտականությունների սահմանում, Ընկերության աշխատակիցների աշխատանքի վարձատրության, պարգեատրման եւ այլ խրախուսումների չափի սահմանում՝ տնօրենների խորհրդի կողմից հաստատված բյուջեի սահմաններում.

դ) ներքին աուդիտի ծառայության անձնակազմի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

ե) Ընկերության բոլոր աշխատակիցների կողմից կատարման համար պարտադիր հրամանների արձակում եւ հանձնարարականներ տալը, ինչպես նաեւ լիազորագրերի ձեւակերպում.

զ) Ընկերության մասնակիցների ցուցակի վարում:

4. Վարչության նախագահը կառավարիչների խորհրդի եւ տնօրենների խորհրդի առջեւ պատասխանատվություն է կրում նրանց որոշումների կատարման, Ընկերության աշխատանքի կազմակերպման եւ դրա գործունեության արդյունքների համար:

5. Վարչության նախագահի բացակայության կամ նրա կողմից իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա գործառույթներն ու լիազորություններն իրականացնում է նրա տեղակալներից (եթե այդպիսիք կան) կամ վարչության անդամներից մեկը:

Բաժին IV

Ընկերության գործունեության առանձին ասպեկտները

Հոդված 19

Որպես միջազգային կազմակերպություն՝ Ընկերության կարգավիճակը,
քաղաքական գործունեության արգելքը

1. Ընկերությունը, Ընկերության վարչության նախագահը, վարչության նախագահի տեղակալները (եթե այդպիսիք կան), վարչության անդամները եւ աշխատակիցներն իրենց որոշումներում առաջնորդվում են բացառապես Ընկերության շահերով, դրա նպատակներով եւ գործառույթներով, որոնք նախատեսված են սույն կանոնադրությամբ:

Ընկերության վարչության նախագահը, վարչության նախագահի տեղակալները (եթե այդպիսիք կան), վարչության անդամները եւ աշխատակիցներն իրենց պարտականությունները կատարելիս գործում են միայն Ընկերության շահերից ելնելով:

Մասնակիցները ձեռնպահ են մնում նշված անձանց կողմից իրենց պարտականությունների կատարման ժամանակ նրանցից որեւէ մեկի վրա ճնշում գործադրելու ցանկացած փորձից:

2. Ընկերությունը չի մասնակցում ռեսուրսների ներգրավման, օգնության կամ այլ տեսակի աջակցության ստացման գործընթացներին, որոնք կարող են որեւէ կերպ վնաս հասցնել Ընկերության նպատակներին կամ գործառույթներին, սահմանափակել դրանք, հանգեցնել դրանցից շեղումներին կամ որեւէ կերպ փոփոխել դրանք:

3. Ընկերությունը, Ընկերության վարչության նախագահը, վարչության նախագահի տեղակալները (եթե այդպիսիք կան), վարչության անդամները եւ աշխատակիցները չպետք է միջամտեն ցանկացած մասնակից պետությունում

տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին: Ընկերության կառավարման մարմինների որոշումները չպետք է ընդունվեն մասնակիցների քաղաքական ճնշման տակ:

Ընկերության կառավարման մարմինները որոշումներ ընդունելիս պետք է առաջնորդվեն բացառապես այն նկատառումներով, որոնք ուղղված են սույն կանոնադրության նպատակների իրագործմանը:

Հոդված 20

Կապի ուղիները

Յուրաքանչյուր մասնակից որոշում է իր պաշտոնական մարմինը կամ ներկայացուցչին, որի հետ Ընկերությունը լուծում է սույն կանոնադրության շրջանակներում ծագող հարցերը:

Հոդված 21

Ընկերության աշխատանքային եւ պաշտոնական լեզուները

Ընկերության աշխատանքային եւ պաշտոնական լեզուն ռուսերենն է:

Հոդված 22

Ընկերության ֆինանսական տարին

Ընկերության ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ին եւ ավարտվում դեկտեմբերի 31-ին:

Հոդված 23

Ընկերության աուդիտը եւ հաշվետվությունների հրապարակումը

1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության հսկողության

իրականացման համար դրա կառուցվածքում ստեղծվում է ներքին աուդիտի ծառայություն, որի անձնակազմը հաստատվում է տնօրենների խորհրդի կողմից, 1 տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ: Ներքին աուդիտի ծառայությունը հաշվետու է տնօրենների խորհրդին:

2. Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիության ստուգման եւ հաստատման համար ամեն տարի անցկացվում է Ընկերության անկախ արտաքին աուդիտ:

Աուդիտի անցկացման լիցենզիա ունեցող եւ Ընկերության կամ դրա մասնակիցների հետ գույքային շահերով չկապված անկախ միջազգային մասնագիտական աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը սահմանվում է տնօրենների խորհրդի կողմից:

Տնօրենների խորհրդի կողմից ամեն տարի հաստատվում է ընտրության արդյունքներով լավագույնը ճանաչված անկախ միջազգային մասնագիտական աուդիտորական կազմակերպությունը, եւ տնօրենների խորհուրդը վարչության նախագահին է տրամադրում դրա հետ պայմանագիր կնքելու իրավունքը:

3. Ընկերությունը տարեկան հաշվետվությունը եւ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը մասնակիցներին է ուղարկում հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակի վերջին օրվանից ոչ ուշ:

Ընկերությունը հրապարակում է իր ֆինանսական հաշվետվությունները եւ ցանկացած այլ հաշվետվություն, որի հրապարակումն իրեն նպատակահարմար է՝ իր նպատակների իրագործման եւ իր գործառույթների կատարման համար՝ ելնելով ապահովագրական գործունեության՝ համընդհանուր ճանաչված սկզբունքներից:

Հոդված 24

Ընկերության գործունեության վերստուգումը

1. Ընկերության գործունեության վերստուգումն իրականացնում է Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը, որը հաստատվում է տնօրենների խորհրդի կողմից՝ 4 տարի ժամկետով: Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ մտնում են վերստուգիչ հանձնաժողովի նախագահը եւ դրա անդամները:
2. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը եւ անդամները չեն կարող որեւէ պաշտոն զբաղեցնել Ընկերությունում:
3. Վերստուգումների կազմակերպումը եւ անցկացման կարգը սահմանվում են տնօրենների խորհրդի կողմից:
4. Վարչության նախագահը Ընկերության վերստուգիչ հանձնաժողովին է տրամադրում վերստուգումն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր նյութերը:
5. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները տնօրենների խորհուրդ են ներկայացվում տարին առնվազն 1 անգամ:

Բաժին V

Ընկերության կազմից դուրս գալը, Ընկերության
գործունեության կասեցումը, Ընկերության լուծարումը

Հոդված 25

Ընկերության կազմից մասնակիցների դուրս գալը

1. Ցանկացած մասնակից իրավունք ունի իր հայեցողությամբ դուրս գալու Ընկերության կազմից՝ կառավարիչների խորհրդին իր մտադրության մասին գրավոր ծանուցելու միջոցով:

Կառավարիչների խորհրդի կողմից նշված ծանուցումն ստանալու օրվանից՝

ա) Համաձայնագրին եւ (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան այդ մասնակցին տրամադրված բոլոր իրավունքները, բացառությամբ Ընկերության կազմից դուրս գալու իրավունքի, կասեցվում են.

բ) այդ մասնակիցն իրավունք չունի քվեարկել կառավարիչների խորհրդի կամ տնօրենների խորհրդի կողմից որեւէ որոշում կայացնելու ժամանակ: Ընդ որում՝ նա պահպանում է Ընկերության առջեւ ունեցած բոլոր ուղղակի եւ անուղղակի պարտավորությունները՝ մինչեւ Ընկերության կազմից դուրս գալը.

գ) այդ մասնակիցը պարտավորություններ չի կրում այն դիսկերի համար, որոնք Ընկերությունն ընդունել է վերաապահովագրության պայմանագրեր կնքելիս Ընկերության կազմից այդ մասնակցի դուրս գալու մտադրության մասին ծանուցումն ստանալուց հետո, ինչպես նաեւ չի մասնակցում Ընկերության եկամուտների եւ ծախսերի բաշխման գործընթացին:

2. Կառավարիչների խորհրդի կողմից Ընկերության կազմից դուրս գալու մտադրության մասին մասնակցից ծանուցումն ստանալու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում պետք է կնքվի համաձայնագիր՝ Ընկերության եւ այդ մասնակցի միջեւ հարաբերությունների կարգավորման ժամկետի եւ կարգի մասին:

3. Մինչեւ կառավարիչների խորհրդի կողմից Ընկերության կազմից դուրս գալու մտադրության մասին մասնակցից ծանուցումն ստանալու օրվանից սկսած 6 ամիսը լրանալը կամ մինչեւ Ընկերության եւ մասնակցի միջեւ հարաբերությունների կարգավորման ժամկետի եւ կարգի մասին համաձայնագրի կնքման ամսաթիվը՝ այդ մասնակցից կարող է կառավարիչների խորհրդին գրավոր ծանուցել նշված ծանուցումը չեղարկելու մասին:

4. Ընկերության կազմից դուրս գալու իր մտադրության մասին կառավարիչների խորհրդին ծանուցած մասնակիցն Ընկերության գործունեությանն իր մասնակցությունը դադարեցնում է իր եւ Ընկերության միջեւ հարաբերությունների կարգավորման ժամկետի եւ կարգի մասին համաձայնագրի կնքման օրվանից, սակայն կառավարիչների խորհրդի կողմից գրավոր ծանուցումն ստանալու օրվանից սկսած 6 ամսվանից ոչ ուշ:

5. Ընկերության գործունեության մեջ մասնակից պետության մասնակցությունը դադարեցնելու օրվանից սկսած 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ՝ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան, Ընկերությունը Համաձայնագրի ավանդապահին է ուղարկում Ընկերության կազմից այդ պետության դուրս գալու մասին ծանուցումը:

Հոդված 26

Նախկին մասնակիցների հետ հաշվարկների կարգավորումը

1. Ընկերությունը եւ մասնակիցը մինչեւ Ընկերության գործունեությանը մասնակցությունը դադարեցնելու օրը կարող են ձեռք բերել Ընկերության կանոնադրական կապիտալում այդ մասնակցի մասնաբաժնի հետգնման վերաբերյալ պայմանավորվածություն՝ փոխշահավետ պայմաններով:

2. Եթե Ընկերության կողմից Ընկերության կազմից դուրս գալու իր մտադրության մասին գրավոր ծանուցումը մասնակցից ստանալու օրվանից 6 ամիսը լրանալուց հետո կանոնադրական կապիտալում այդ մասնակցի

մասնաբաժնի հետգնման վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք չի բերվել, ապա այդ մասնաբաժնի հետգնումն իրականացվում է Ընկերության կողմից՝ հետեւյալ պայմաններով՝

ա) հետգնման գինը որոշվում է՝ հիմք ընդունելով Ընկերության կողմից Ընկերության կազմից դուրս գալու իր մտադրության մասին ծանուցումը մասնակցից ստանալու օրվա դրությամբ Ընկերության զուտ ակտիվների արժեքը եւ Ընկերության կանոնադրական կապիտալում այդ մասնակցի վճարած մասնաբաժնի ծավալը.

բ) մասնաբաժնի համար վճարումը կատարվում է մի քանի փուլերով՝ այն չափով եւ ժամկետներում, որոնք կորոշի կառավարիչների խորհուրդը՝ հաշվի առնելով Ընկերության ֆինանսական վիճակը.

գ) վճարումները կարող են կատարվել մի քանի փուլերով, այն սահմանաչափերով, որոնց դեպքում որպես հետգնման գին հասանելիք գումարները գերազանցում են սույն կանոնադրության 25-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված՝ Ընկերության առջեւ ունեցած պարտավորությունների ընդհանուր գումարը.

դ) իր մասնաբաժնի հետգնման համար մասնակցին հասանելիք գումարը պահվում է՝ մինչեւ մասնակցի կամ նրա ստորաբաժանումներից ցանկացածի կողմից Ընկերության առջեւ այնպիսի գումարի վճարման գծով ֆինանսական պարտավորությունների կարգավորման պահը, որը, կառավարիչների խորհրդի հայեցողությամբ, կարող է հաշվանցվել իր մասնաբաժնի հետգնման համար մասնակցին հասանելիք գումարի հաշվին.

ե) եթե Ընկերությունը զուտ վնաս կրի մասնակցի կողմից Ընկերության կազմից դուրս գալու ամսաթվի դրությամբ սույն կանոնադրությանը համապատասխան ընդունած վերաապահովագրության իր ռիսկերի համար, եւ եթե այդ վնասի գումարը գերազանցի այդ գործառնությունների համար տրամադրված պահուստների գումարը, ապա այդ մասնակցին Ընկերության

պահանջով կմարի այն գումարը, որով իր մասնաբաժինների հետզնման գինը կնվազեր, եթե այդ վնասը հաշվի առնվեր հետզնման գինը որոշելիս.

զ) իր մասնաբաժնի հետզնման համար մասնակցին հասանելիք ոչ մի գումար չի վճարվում՝ Ընկերության կողմից Ընկերության կազմից դուրս գալու իր մտադրության մասին ծանուցումը մասնակցից ստանալու օրվանից հետո 6 ամսվանից շուտ: Եթե Ընկերության կազմից մասնակցի դուրս գալու օրվանից հետո 6 ամսվա ընթացքում կառավարիչների խորհուրդն ընդունում է սույն կանոնադրության 12-րդ հոդվածի «է» ենթակետով նախատեսված՝ Ընկերության լուծարումը նախաձեռնելու մասին որոշումը, ապա Ընկերության ու այդ մասնակցի միջև բոլոր իրավահարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրության 29-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դրույթներով:

3. Նախկին մասնակցի հետ հաշվարկների կարգավորման արդյունքներով՝ Ընկերության կանոնադրական կապիտալում Ընկերության կողմից հետ գնված նրա մասնաբաժինը կառավարիչների խորհրդի որոշմամբ կարող է առաջարկվել մյուս մասնակիցներին:

Հոդված 27

Ընկերությունում մասնակցության կասեցումը

1. Եթե մասնակիցը չի կատարում Ընկերության առջև ունեցած իր պարտավորությունները, ապա կառավարիչների խորհրդի որոշմամբ նրա մասնակցությունն Ընկերությունում կարող է կասեցվել:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված մասնակցի գործունեությունը՝ Ընկերությունում նրա մասնակցության կասեցման ժամանակահատվածում, սահմանվում է սույն կանոնադրության 25-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգով:

3. Եթե Ընկերությունում մասնակցության կասեցման մասին որոշումն

ընդունելու օրվանից 1 տարին լրանալուց հետո կառավարիչների խորհուրդը մասնակցի իրավունքների վերականգնման մասին որոշում չի ընդունում, ապա այդ մասնակիցը համարվում է Ընկերության կազմից հանված: Այդ մասնակցի եւ Ընկերության միջեւ հետագա իրավահարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրության 25-րդ եւ 26-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 28

Ընկերության գործունեության ժամանակավոր կասեցումը

Արտակարգ իրավիճակում վարչությունը, կառավարիչների խորհրդի կողմից ընդունվող որոշման հիման վրա, կարող է ժամանակավորապես կասեցնել Ընկերության վերաապահովագրական գործունեությունը՝ մինչեւ կառավարիչների խորհրդի կողմից ստեղծված իրավիճակի ուսումնասիրումը եւ դրա կողմից անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը՝ նախկինում կնքված համաձայնագրերով բոլոր պարտավորությունների պահպանմամբ ու կատարմամբ:

Հոդված 29

Ընկերության գործունեության դադարեցումը եւ Ընկերության լուծարումը

1. Ընկերության լուծարումը նախաձեռնելու մասին որոշումը, ինչպես նաեւ դրա լուծարման մասին որոշումն ընդունվում են կառավարիչների խորհրդի կողմից:

2. Կառավարիչների խորհրդի կողմից Ընկերության լուծարումը նախաձեռնելու մասին որոշումն ընդունվելու դեպքում Ընկերությունն անհապաղ դադարեցնում է իր գործունեությունը՝ բացառությամբ իր ակտիվների պահպանման եւ ֆինանսական պարտավորությունների կարգավորման գործունեության:

Մինչեւ պարտավորությունների վերջնական կարգավորումը եւ ակտիվների բաշխումը՝ պահպանվում են Ընկերության եւ դրա մասնակիցների բոլոր փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները:

3. Պարտատերերին կատարվող վճարումները կատարվում են Ընկերության ակտիվների հաշվին: Նախքան պարտատերերին վճարումների կատարումը՝ վարչությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ պահանջատերերի միջև վճարների համամասն բաշխում ապահովելու համար:

4. Ընկերության ակտիվները բաշխվում են հետևյալ կարգով՝

ա) մասնակիցների միջև ակտիվները բաշխվում են պարտատերերի առջև Ընկերության ունեցած բոլոր պարտավորությունները մարելուց կամ դրանք մարելու համար պահուստ ստեղծելուց հետո.

բ) Ընկերության ակտիվների բաշխումը կատարվում է կանոնադրական կապիտալում յուրաքանչյուր մասնակցի կողմից վճարված մասնաբաժինների չափերին համամասն, եւ իրականացվում է տնօրենների խորհրդի կողմից սահմանված կարգով: Մասնակիցների միջև բաշխվող ակտիվները կարող են արտահայտվել դրամական եւ ոչ դրամական ձեւերով: Մասնակիցն իրավունք չունի ստանալու բաշխված ակտիվների իր մասնաբաժինը, քանի դեռ նա չի կատարել Ընկերության առջև ունեցած ֆինանսական պարտավորությունները.

գ) սույն կետին համապատասխան բաշխվող ակտիվներն ստացող մասնակիցն այդ ակտիվների առնչությամբ ունի համանման այնպիսի իրավունքներ, որոնցից Ընկերությունն օգտվել է այդ ակտիվների առնչությամբ՝ նախքան դրանց բաշխումը:

Բաժին VI

Ընկերության անձեռնմխելիությունները,
առանձնաշնորհումները եւ արտոնությունները

Հոդված 30

Ընկերության անձեռնմխելիությունները եւ առանձնաշնորհումները

1. Իր նպատակների իրագործման եւ իր գործառույթների կատարման համար Ընկերությանը յուրաքանչյուր մասնակից պետության տարածքում շնորհվում են այնպիսի անձեռնմխելիություններ, առանձնաշնորհումներ եւ արտոնություններ, որոնք նախատեսված են սույն բաժնով եւ սահմանված են Ընկերության եւ մասնակից պետությունների միջեւ կնքված համաձայնագրերին համապատասխան:

2. Ընկերությունն ունի անձեռնմխելիություն դատական հետապնդման ցանկացած ձեւի նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, որոնք Ընկերության լիազորությունների իրականացման հետեւանք չեն կամ կապված չեն այդ լիազորությունների իրականացման հետ: Ընկերության դեմ հայցերը, բացառությամբ Ընկերության ու մասնակցի միջեւ այն վեճերի, որոնց վրա տարածվում է սույն կանոնադրության 34-րդ հոդվածի գործողությունը, կարող են ներկայացվել միայն այն պետության տարածքում գտնվող իրավասու դատարան, որտեղ Ընկերությունը տեղակայված է կամ ունի մասնաճյուղ, ներկայացուցչություն կամ դուստր ընկերություն, կամ դատական ծանուցումը կամ դատավարության մասին ծանուցումն ստանալու նպատակներով նշանակել է գործակալ, կամ թողարկել է արժեթղթեր կամ երաշխավորել է դրանք:

3. Անկախ սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ Ընկերության դեմ ոչ մի գործողություն չի ձեռնարկվում, եւ որեւէ հայց չի ներկայացվում ցանկացած մասնակցի կամ այլ անձի, մարմնի եւ հաստատության կողմից, որոնք գործում կամ պահանջներ են ներկայացնում այդ մասնակցի անունից: Մասնակիցները կարող

են կիրառել վեճերի կարգավորման համար հատուկ ընթացակարգեր, որոնք նախատեսված են սույն կանոնադրությամբ, Ընկերության հիմնադրույթներով եւ կանոնակարգերով, ինչպես նաեւ Ընկերության ու մասնակից պետությունների կառավարությունների եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների միջեւ կնքված համաձայնագրերով:

4. Մասնակից պետությունների տարածքներում գտնվող՝ Ընկերության գույքը եւ ակտիվներն անձեռնմխելիություններ ունեն խուզարկության, բռնագրավման, արգելանքի, առգրավման, ունեզրկման կամ առգրավման, կամ օտարման ցանկացած այլ ձեւի նկատմամբ՝ նախքան Ընկերության առնչությամբ վերջնական դատական որոշում կայացնելը:

5. Ընկերության ամբողջ գույքը եւ ակտիվները, անկախ դրանց գտնվելու վայրից, ազատ են ցանկացած սահմանափակումից, կարգադրագրից եւ մորատորիումից:

6. Արխիվները, գույքը, փաստաթղթերը, ինչպես նաեւ ցանկացած տեղեկատվություն, որոնք պատկանում են Ընկերությանը, կամ որոնց տիրապետողն է Ընկերությունը, անձեռնմխելի են մասնակից պետությունների տարածքներում:

7. Մասնակից պետությունները Ընկերության պաշտոնական կապի համար Ընկերությանը տրամադրում են այնպիսի բարենպաստ պայմաններ, որոնք չեն զիջում այն պայմաններին, որոնք այդ մասնակից պետությունների կառավարությունները տրամադրում են ցանկացած այլ պետության, այդ թվում՝ դրա դիվանագիտական ներկայացուցչություններին, փոստային առաքումների, մալուխային հեռագրերի, հեռագրերի, ռադիոգրերի, հեռախոսից եւ կապի այլ միջոցներից օգտվելու առաջնահերթության, սակագների եւ դրույքաչափերի մասով, ինչպես նաեւ զանգվածային լրատվության միջոցների համար տեղեկությունների փոխանցման նպատակներով նվազեցված դրույքաչափերի կիրառման մասով: Նշված ծառայությունների համար վճարման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Ընկերության միջոցների հաշվին:

8. Ընկերության կառավարիչների խորհրդի նախագահը եւ կառավարիչների խորհրդի անդամները, տնօրենների խորհրդի նախագահը եւ տնօրենների խորհրդի անդամները, վարչության նախագահը, վարչության նախագահի տեղակալները (եթե այդպիսիք կան), վարչության անդամները եւ աշխատակիցները ցանկացած ձեւի անձեռնմխելիություններ ունեն ծառայողական պարտականությունները կատարելիս իրենց կողմից կատարված գործողությունների առնչությամբ դատական եւ վարչական հետապնդման նկատմամբ: Սույն կետի դրույթները չեն կիրառվում վերոնշյալ անձանց գործողությունների, այդ թվում՝ ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով քաղաքացիների կյանքին եւ առողջությանը վնաս պատճառելու համար քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման դեպքերում:

Հոդված 31

Հարկային արտոնությունները

1. Ընկերությունը, դրա եկամուտները, գույքը եւ այլ ակտիվներ, ինչպես նաեւ այն գործառնություններն ու գործարքները, որոնք Ընկերության կողմից Համաձայնագրին եւ սույն կանոնադրությանը համապատասխան իրականացվում են մասնակից պետությունների տարածքներում, ազատվում են հարկերից, վճարներից, տուրքերից եւ այլ վճարումներից՝ բացառությամբ այն վճարների, որոնք վճարներ են սպասարկման կոնկրետ տեսակների դիմաց:

2. Ընկերության վարչության նախագահի, վարչության նախագահի տեղակալների (եթե այդպիսիք կան), վարչության անդամների եւ աշխատակիցների աշխատավարձն ու վարձատրությունն ազատվում են հարկումից:

Յուրաքանչյուր մասնակից պետություն իրավունք ունի չկիրառելու սույն կետի

առաջին պարբերության մեջ նշված հարկազատումն իր քաղաքացիների եւ այն անձանց նկատմամբ, որոնք մշտապես բնակվում են իր տարածքում:

3. Ոչ մի պարտավորություն կամ Ընկերության կողմից թողարկված ոչ մի արժեթուղթ, անկախ այն հանգամանքից, թե ով է դրանց իրավատերը, ինչպես նաեւ դրանց մասով շահաբաժինները կամ տոկոսները մասնակից պետություններում որեւէ հարկով չեն հարկվում հետեւյալ դեպքերում՝

ա) եթե այդ հարկերը այդպիսի պարտավորությունների կամ արժեթղթերի առնչությամբ խտրական են միայն այն պատճառով, որ թողարկվել են Ընկերության կողմից.

բ) եթե այդպիսի հարկման համար միակ հիմքը նշված պարտավորությունների կամ արժեթղթերի թողարկման վայրն է, կամ արժույթը, որով դրանք թողարկվել են, ենթակա են վճարման կամ վճարվում են, կամ Ընկերությանը պատկանող որեւէ հաստատության կամ գործունեության վայրի գտնվելու տեղը:

Հոդված 32

Անձեռնմխելիություններից եւ առանձնաշնորհումներից հրաժարումը

Ընկերությունը կարող է հրաժարվել սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած անձեռնմխելիությունից, առանձնաշնորհումից կամ արտոնությունից, որոնք, իր կարծիքով, չեն համապատասխանում Ընկերության շահերին:

Վարչության նախագահը պարտավոր է հրաժարվել ցանկացած անձեռնմխելիությունից, առանձնաշնորհումից կամ արտոնությունից Ընկերության ցանկացած աշխատակցի առնչությամբ, բացառությամբ վարչության նախագահի, վարչության նախագահի տեղակալների (եթե այդպիսիք կան) եւ վարչության անդամների, այն դեպքում, երբ, իր կարծիքով, այդ անձեռնմխելիությունը, առանձնաշնորհումը կամ արտոնությունը բարդացնում են արդարադատության

իրականացումը, եւ երբ դրանցից հրաժարումը Ընկերության շահերին վնաս չի հասցնում: Համանման դեպքերում կառավարիչների խորհուրդը եւ տնօրենների խորհուրդը պարտավոր են հրաժարվել ցանկացած անձեռնմխելիությունից, առանձնաշնորհումից կամ արտոնությունից՝ վարչության նախագահի, վարչության նախագահի տեղակալների (եթե այդպիսիք կան) եւ վարչության անդամների առնչությամբ:

Բաժին VII

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 33

Սույն կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը

1. Մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ սույն կանոնադրության մեջ կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան:

2. Մասնակցից ստացվող՝ սույն կանոնադրության մեջ փոփոխությունների կատարման վերաբերյալ առաջարկի մասին տեղեկացվում է կառավարիչների խորհրդի նախագահը, որը ներկայացնում է այն կառավարիչների խորհրդի քննարկմանը:

Հոդված 34

Սույն կանոնադրության կիրառման հետ կապված եւ Ընկերության գործունեության իրականացման ընթացքում ծագող վեճերի կարգավորումը

1. Այն վեճերն ու տարաձայնությունները, որոնք կապված են սույն կանոնադրության կիրառման հետ եւ Ընկերության գործունեության իրականացման ընթացքում ծագում են Ընկերության ու մասնակցի միջեւ, կամ Ընկերության եւ նախկին մասնակցի միջեւ, կամ Ընկերության եւ մասնակցի միջեւ Ընկերության գործունեության կասեցման (դադարեցման) ժամանակ, վեճի կողմերի կողմից կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

2. Եթե այդ վեճերը եւ տարաձայնությունները չեն կարգավորվել բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով, ապա կողմերից ցանկացածի կողմից դրանք սահմանված կարգով փոխանցվում են կառավարիչների խորհուրդ՝ կարգավորման համար:

3. Վեճի կողմերից ցանկացածն իրավունք ունի վիճարկելու կառավարիչների խորհրդի որոշումը՝ վեճը փոխանցելով երեք արբիտրներից կազմված միջնորդ դատարանի քննությանը, որոնցից մեկը նշանակվում է Ընկերության կողմից, մյուսը՝ համապատասխան մասնակցի կողմից, իսկ երրորդը՝ նշանակված արբիտրների համաձայնությամբ: Եթե կողմերը համաձայնության չեն եկել, ապա երրորդ արբիտրը նշանակվում է կառավարիչների խորհրդի կողմից հաստատվող ցանկում ընդգրկված մարմնի կողմից: Նշված ցանկից կոնկրետ մարմինը որոշվում է կառավարիչների խորհրդի որոշմամբ՝ ելնելով դրա իրավասության ու անկողմնակալության սկզբունքներից:

4. Որոշումն արբիտրների կողմից ընդունվում է ձայների մեծամասնությամբ եւ վերջնական ու պարտադիր է կատարման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական վերաապահովագրական
ընկերության կանոնադրության

**Եվրասիական վերաապահովագրական ընկերության կանոնադրական
կապիտալում հիմնադիրների մասնակցության մասնաբաժինները**

Հայաստանի Հանրապետություն՝ 450 000 000 (չորս հարյուր հիսուն միլիոն)
ռուսական ռուբլի՝ կանոնադրական կապիտալի 3 (երեք) տոկոսը,

Բելառուսի Հանրապետություն՝ 4 500 000 000 (չորս միլիարդ հինգ հարյուր
միլիոն) ռուսական ռուբլի՝ կանոնադրական կապիտալի 30 (երեսուն) տոկոսը,

Ղազախստանի Հանրապետություն՝ 3 000 000 000 (երեք միլիարդ)
ռուսական ռուբլի՝ կանոնադրական կապիտալի 20 (քսան) տոկոսը,

Ղրղզական Հանրապետություն՝ 300 000 000 (երեք հարյուր միլիոն)
ռուսական ռուբլի՝ կանոնադրական կապիտալի 2 (երկու) տոկոսը,

Ռուսաստանի Դաշնություն՝ 6 750 000 000 (վեց միլիարդ յոթ հարյուր հիսուն
միլիոն) ռուսական ռուբլի՝ կանոնադրական կապիտալի 45 (քառասունհինգ)
տոկոսը:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2022թ. հոկտեմբերի 20-ին քաղաք
Երևանում ստորագրված «Եվրասիական վերաապահովագրական ընկերության
հիմնադրման մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

СОГЛАШЕНИЕ

об учреждении Евразийской перестраховочной компании

Республика Армения, Республика Беларусь, Республика Казахстан, Кыргызская Республика, Российская Федерация, именуемые в дальнейшем Сторонами,

в целях содействия экономическому росту и расширения взаимных и внешних торгово-экономических связей Сторон,

согласились о нижеследующем:

Статья 1

1. Учредить Евразийскую перестраховочную компанию (ЕПК) (далее – Компания), призванную содействовать увеличению объемов взаимной торговли, инвестиций, развитию экономической интеграции между Сторонами, повышению инвестиционной привлекательности и расширению торгово-экономических связей Сторон с третьими странами путем осуществления деятельности в сфере перестрахования экспортных кредитов (включая все финансовые инструменты поддержки экспорта), экспортно ориентированного финансирования и инвестиций от предпринимательских и (или) политических рисков в Сторонах и в третьих странах.

Компания содействует укреплению международного финансово-экономического сотрудничества, в том числе экспортных кредитных агентств Сторон, международных финансовых и банковских организаций и союзов.

2. Компания в своей деятельности руководствуется настоящим Соглашением, Уставом Компании согласно приложению к настоящему Соглашению, являющемуся его неотъемлемой частью, общепризнанными принципами и нормами международного права.

Статья 2

1. Компания является международной финансовой организацией – субъектом международного права, обладает международной правоспособностью и имеет право в пределах своей компетенции заключать международные договоры.

2. Участниками Компании могут быть государства и международные финансовые организации в порядке, определенном Уставом Компании.

3. Уставный капитал Компании состоит из номинальной стоимости долей ее участников. Оплата долей участия в уставном капитале Компании осуществляется в соответствии с Уставом Компании.

4. Положения законодательства Сторон, устанавливающие порядок создания, лицензирования, регулирования и надзора за деятельностью, а также прекращения деятельности организаций, на Компанию не распространяются.

5. Компания для обеспечения выполнения своих функций может заключать международные договоры с правительствами Сторон, в том числе об условиях пребывания Компании на их территориях, а также с иными уполномоченными органами Сторон по вопросам, входящим в их компетенцию.

Статья 3

Настоящее Соглашение открыто для присоединения к нему других государств при условии выполнения ими требований и процедур, предусмотренных Уставом Компании.

Настоящее Соглашение вступает в силу для присоединяющегося к нему государства с даты получения депозитарием документа о присоединении к настоящему Соглашению.

Статья 4

1. Любая Сторона вправе выйти из настоящего Соглашения, направив депозитарию настоящего Соглашения по дипломатическим каналам письменное уведомление о своем намерении выйти из настоящего Соглашения.

2. Сторона, направившая уведомление, указанное в пункте 1 настоящей статьи, начинает процесс урегулирования отношений с Компанией в соответствии со статьями 25 и 26 Устава Компании.

Действие настоящего Соглашения в отношении этой Стороны прекращается через 30 календарных дней после получения депозитарием уведомления, предусмотренного пунктом 5 статьи 25 Устава Компании.

3. Выход из состава Компании других участников Компании осуществляется в соответствии с разделом V Устава Компании.

Статья 5

В настоящее Соглашение по взаимному согласию Сторон могут вноситься изменения, которые будут являться неотъемлемой частью настоящего Соглашения и оформляются отдельными протоколами.

Статья 6

Оговорки к настоящему Соглашению не допускаются.

Статья 7

Разногласия, связанные с толкованием положений настоящего Соглашения, разрешаются путем переговоров и консультаций между Сторонами.

Споры, связанные с применением Соглашения и возникающие в ходе деятельности Компании, разрешаются в соответствии с Уставом Компании.

Статья 8

Настоящее Соглашение вступает в силу с даты получения по дипломатическим каналам последнего письменного уведомления о выполнении Сторонами внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу.

Совершено в городе Ереване «20» октября 2022 года в одном подлинном экземпляре на русском языке.

Подлинный экземпляр настоящего Соглашения хранится в Министерстве иностранных дел Российской Федерации, которое, являясь депозитарием настоящего Соглашения, направит каждой Стороне его заверенную копию.

За Республику
Армения

За Республику
Беларусь

За Республику
Казахстан

За Кыргызскую
Республику

За Российскую
Федерацию

ПРИЛОЖЕНИЕ

к Соглашению об учреждении
Евразийской перестраховочной компании

УСТАВ Евразийской перестраховочной компании

Евразийская перестраховочная компания (ЕПК) (далее – Компания) учреждена в соответствии с Соглашением об учреждении Евразийской перестраховочной компании от 20 октября 2022 года (далее – Соглашение) и осуществляет свою деятельность в соответствии с ним и настоящим Уставом.

Настоящий Устав является неотъемлемой частью Соглашения и определяет задачи, функции, особенности правового статуса и финансового обеспечения Компании как международной организации.

Раздел I Общие положения

Статья 1 Цели Компании

Компания призвана способствовать увеличению объемов взаимной торговли и инвестиций, развитию экономической интеграции между государствами – участниками Компании (далее – государства – участники), повышению инвестиционной привлекательности и расширению торгово-экономических связей государств – участников с третьими странами посредством осуществления деятельности в соответствии с Соглашением и настоящим Уставом.

Компания осуществляет деятельность, направленную на укрепление международного финансово-экономического

сотрудничества, в соответствии с принципом открытости для вступления в нее новых участников.

Статья 2 Функции Компании

Для достижения своих целей Компания выполняет следующие функции:

осуществляет перестрахование (включая ретроцессию и иные формы перестрахования) и обеспечение экспортных кредитов (включая все финансовые инструменты поддержки экспорта), экспортно ориентированного финансирования и инвестиций от предпринимательских и (или) политических рисков при взаимной торговле и инвестициях государств – участников, экспорте их совместно произведенной продукции в третьи страны, привлечении инвестиций из третьих стран и в отношении совместных инвестиций государств – участников в третьи страны в целях содействия экспорту. При принятии рисков в перестрахование Компания руководствуется целями достижения установленных показателей деятельности, обеспечения финансовой устойчивости Компании, при этом учитывая баланс интересов участников Компании (далее – участники) в соответствии с их долями участия в уставном капитале Компании;

осуществляет взаимодействие с экспортными кредитными агентствами, страховщиками и перестраховщиками государств – участников и третьих стран в целях реализации функций по перестрахованию и обеспечению экспортных кредитов (включая все инструменты поддержки экспорта), экспортно ориентированного финансирования и инвестиций;

содействует в проведении оценки рисков, минимизации рисков и урегулировании убытков при перестраховании рисков в государствах – участниках;

осуществляет сотрудничество с частными, государственными и международными организациями, банками развития, финансовыми и иными организациями для обеспечения деятельности Компании;

осуществляет выпуск, размещение, обращение, погашение и выкуп собственных ценных бумаг в соответствии с порядком, утверждаемым советом директоров Компании (далее – совет директоров);

осуществляет инвестирование средств (средств страховых резервов, собственных средств, а также иных временно свободных средств) в государствах – участниках и за их пределами;

проводит маркетинговые исследования, консультационную, исследовательскую и просветительскую деятельность в сфере перестрахования;

осуществляет иную деятельность, которая не противоречит целям Компании, в соответствии с двусторонними соглашениями, заключенными Компанией с государствами – участниками, общепризнанными принципами и нормами международного права.

Статья 3

Статус и местонахождение Компании

1. Компания пользуется правами юридического лица в государствах – участниках и осуществляет в том числе следующие полномочия:

а) совершает сделки, не противоречащие настоящему Уставу;

б) арендует, приобретает и отчуждает движимое и недвижимое имущество, а также иным способом распоряжается указанным имуществом;

в) выступает в судебных и арбитражных органах государств – участников. При этом за Компанией признаются те же процессуальные права для защиты своих интересов, которые закреплены законодательством государств – участников за юридическими лицами;

г) совершает другие действия, направленные на достижение целей Компании, в соответствии с настоящим Уставом.

2. Компания не отвечает по обязательствам участников, а участники не отвечают по обязательствам Компании. Участники несут риск убытков, связанных с деятельностью Компании, в пределах стоимости принадлежащих им долей.

3. Местонахождение Компании – город Москва, Российская Федерация.

4. Деятельность Компании на территориях государств – участников осуществляется в соответствии с Соглашением, настоящим Уставом, соглашениями, заключенными Компанией с правительствами государств – участников (в том числе об условиях пребывания Компании на их территориях) и иными уполномоченными органами государств – участников в пределах их компетенции, а в случае отсутствия указанных документов либо в части, не урегулированной ими, законодательством государств – участников, на территориях которых осуществляется такая деятельность.

5. По решению совета управляющих Компании (далее – совет управляющих) Компания вправе открывать филиалы и представительства в соответствии с законодательством государств – участников и с учетом особенностей статуса Компании как

международной финансовой организации, а также учреждать дочерние компании и организации.

Статья 4 Учредители и участники Компании

1. Учредителями Компании являются Республика Армения, Республика Беларусь, Республика Казахстан, Кыргызская Республика и Российская Федерация в лице своих правительств.

2. Учредители Компании становятся ее участниками после оплаты своих долей участия в Компании в соответствии со статьей 6 настоящего Устава.

3. Решение о вступлении в Компанию нового государства принимает совет управляющих в соответствии с настоящим Уставом после присоединения к Соглашению и оплаты таким государством доли участия в Компании в порядке, установленном советом управляющих.

4. Решение о вступлении в Компанию международной финансовой организации принимает совет управляющих в соответствии с настоящим Уставом после оплаты такой международной финансовой организацией доли участия в Компании в порядке, установленном советом управляющих.

5. Под государствами – участниками понимаются государства, являющиеся учредителями Компании, и государства, вступившие в Компанию в соответствии с пунктом 3 настоящей статьи.

6. Под участниками понимаются государства – участники, а также международные финансовые организации, вступившие в Компанию в соответствии с пунктом 4 настоящей статьи.

Раздел II Капитал Компании

Статья 5 Уставный капитал

Уставный капитал Компании состоит из номинальной стоимости долей ее участников и составляет 15 млрд российских рублей.

Доли участия учредителей Компании в уставном капитале Компании приведены в приложении, которое является неотъемлемой частью настоящего Устава, и соответствуют соотношению номинальной стоимости соответствующей доли и уставного капитала Компании.

Статья 6 Оплата долей участия в уставном капитале

1. Каждый учредитель Компании осуществляет первоначальную оплату своей доли участия в уставном капитале Компании в размере не менее 25 процентов от доли участия, которая определена для данного учредителя в соответствии с приложением к настоящему Уставу, не позднее 30 календарных дней с даты вступления Соглашения в силу.

2. Первоначальная оплата доли участия в уставном капитале Компании в соответствии с пунктом 1 настоящей статьи может быть произведена досрочно с даты подписания Соглашения. При этом оплата для формирования уставного капитала Компании зачисляется на счет в кредитной организации, определяемой советом управляющих.

3. Оставшиеся части долей участия в уставном капитале Компании погашаются учредителями ежегодно в течение 2 лет равными долями, первая из которых подлежит оплате не позднее чем через 12 месяцев после платежа, совершенного в соответствии с пунктом 2 настоящей статьи.

4. Оплата долей участия в уставном капитале Компании может быть произведена учредителями Компании досрочно.

5. Оплата долей участия в уставном капитале Компании при создании Компании и при увеличении ее уставного капитала осуществляется по номинальной стоимости.

6. Оплата долей участия производится в российских рублях государственным органом или организацией, уполномоченной правительством государства – участника.

7. Если учредитель Компании в течение сроков, установленных пунктами 1 и 3 настоящей статьи, заявил об оплате или оплатил меньше своей доли участия в уставном капитале по сравнению с той, которая предусмотрена приложением к настоящему Уставу, совет управляющих обязан незамедлительно предложить воспользоваться правом увеличения своей доли участия в уставном капитале другим учредителям Компании. Такое право должно быть реализовано в течение 6 месяцев с даты получения указанного предложения. В случае отказа от такого права совет управляющих принимает решение вновь предложить указанную долю к оплате.

8. Средства, поступившие от оплаты долей учредителями Компании, зачисляются на счет Компании в кредитной организации, определяемой советом управляющих.

Статья 7

Изменение уставного капитала

1. Уставный капитал Компании может быть увеличен или уменьшен по решению совета управляющих в соответствии с настоящим Уставом и в порядке, установленном советом управляющих.

2. Участники имеют преимущественное право на приобретение долей при увеличении уставного капитала в количестве, пропорциональном принадлежащей им доле в уставном капитале непосредственно до принятия решения о его увеличении. В случае полного или частичного отказа кого-либо из них от указанного права порядок приобретения долей при увеличении уставного капитала устанавливается советом управляющих.

Статья 8

Резервный фонд и иные фонды Компании

1. В Компании создается резервный фонд в размере 15 процентов от уставного капитала Компании.

2. Резервный фонд Компании формируется путем обязательных ежегодных отчислений в размере не менее 10 процентов от чистой прибыли до достижения им размера, установленного пунктом 1 настоящей статьи.

3. Резервный фонд Компании предназначен для покрытия ее убытков, а также для погашения облигаций Компании и выкупа долей Компании в случае отсутствия иных средств. Резервный фонд не может быть использован в иных целях.

4. Помимо резервного фонда Компания вправе создавать и другие фонды.

5. Отчисления в другие фонды осуществляются в размерах и в порядке, устанавливаемых советом директоров.

Статья 9 Требования к финансовой устойчивости

Компания обязана соблюдать установленные советом директоров требования к обеспечению финансовой устойчивости Компании, в том числе в части совокупного лимита ответственности по принятым обязательствам по договорам перестрахования.

Статья 10 Дивиденды Компании

1. По результатам отчетного года и после утверждения годового отчета, подтвержденного внешним аудитором, совет управляющих в целях расширения деятельности Компании принимает решение (объявляет) о направлении прибыли на увеличение уставного капитала Компании, а также на пополнение резервного и иных фондов Компании.

В случае увеличения уставного капитала Компании за счет прибыли Компании, доли участников в уставном капитале подлежат увеличению пропорционально количеству долей, оплаченных ими по состоянию на конец финансового года, в котором была получена прибыль.

2. В случае если в связи с отсутствием целесообразности советом управляющих не принято решение о направлении прибыли на увеличение уставного капитала Компании, а также на пополнение резервного и иных фондов Компании совет управляющих может принять решение (объявить) о выплате дивидендов участникам в соответствии с их долями участия в уставном капитале Компании.

3. Решение (объявление) о выплате дивидендов участникам может быть принято только после достижения резервным фондом размера, установленного пунктом 1 статьи 8 настоящего Устава.

4. Решение о выплате (объявлении) дивидендов участникам по результатам отчетного года может быть принято в течение 6 месяцев после окончания отчетного года. Компания обязана выплатить объявленные дивиденды.

5. Чистая прибыль Компании определяется в соответствии с данными финансовой (бухгалтерской) отчетности Компании.

6. Решение (объявление) о выплате дивидендов принимается советом управляющих. Указанным решением должны быть определены размер дивидендов по долям, форма их выплаты и дата выплаты.

7. Выплата дивидендов в денежной форме осуществляется Компанией в безналичном порядке.

8. Выплата дивидендов Компании участникам производится пропорционально количеству долей, оплаченных ими по состоянию на конец финансового года, в котором была получена прибыль.

Раздел III Управление Компанией

Управление Компанией осуществляют:

совет управляющих;

совет директоров;

правление Компании (далее – правление);

председатель правления.

Статья 11 Совет управляющих

1. Совет управляющих является высшим органом управления Компании.

2. Каждое государство – участник назначает в совет управляющих 1 члена на уровне заместителя главы правительства и в официальном порядке информирует об этом других участников и Компанию.

В случае вступления в Компанию нового участника – международной финансовой организации, такой участник назначает в совет управляющих 1 члена из числа руководителей высшего органа управления указанной организации.

3. Председательство в совете управляющих осуществляется на ротационной основе 1 участником в порядке русского алфавита в течение 1 календарного года без права продления.

4. За выполнение обязанностей в совете управляющих председателю и членам совета управляющих вознаграждение не выплачивается. В период исполнения ими своих обязанностей могут компенсироваться расходы, связанные с участием в заседаниях, в размере, установленном исходя из финансовых возможностей Компании.

Статья 12

Компетенция совета управляющих

К компетенции совета управляющих относятся следующие вопросы:

а) утверждение стратегии развития Компании на 5 лет и рассмотрение доклада о результатах ее исполнения (реализации), определение приоритетов Компании в области международного сотрудничества и принятие решений о заключении соглашений о сотрудничестве с международными организациями;

б) определение условий принятия и принятие в состав Компании новых участников, приостановление и (или) прекращение участия в Компании отдельного участника;

в) увеличение уставного капитала Компании за счет вкладов участников, в том числе перераспределения уставного капитала между ними, и (или) иных источников финансирования;

г) общие указания совету директоров по регламентации порядка деятельности Компании по перестрахованию, инвестированию средств и обеспечению финансовой устойчивости Компании;

д) направление прибыли на увеличение уставного капитала, пополнение резервного и иных фондов Компании, выплату (объявление) дивидендов по результатам отчетного года;

е) согласование создания иных фондов Компании для реализации ее отдельных функций;

ж) утверждение порядка изменения (увеличения или уменьшения) уставного капитала Компании;

з) приостановление деятельности Компании, ее ликвидация, включая определение сроков и условий распределения чистых активов Компании между участниками, открытие (закрытие) филиалов и представительств Компании;

и) решение вопросов по внесению изменений и дополнений в настоящий Устав;

к) утверждение состава совета директоров, назначение и досрочное прекращение полномочий членов совета директоров;
